

ԿԱՐԾԻՔ

Սյուզաննա Արմենի Վարդանյանի «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

Սյուզաննա Արմենի Վարդանյանի «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է մաքսային ոլորտում վարչական պատասխանատվության մի շարք արդի հիմնահարցերի համակողմանի հետազոտությանը: Ընդ որում, խոսքն այն հիմնահարցերի մասին է, որոնք արդիականություն են ձեռք բերել՝ կապված ԵԱՏՄ-ի շրջանակում ազգային և միջազգային իրավական կարգավորումներում առկա առանձին անհամապատասխանությունների, գործնական մոտեցումների էական առանձնահատկությունների և նմանաբնույթ այլ խնդիրների հետ:

Ընտրված թեմայի և դրա շրջանակում հեղինակի կողմից առանձնացված հարցադրումների ինչպես տեսական, այնպես էլ իրավաստեղծ և իրավակիրառ հարթությամբ արդիականության առնչությամբ հեղինակը շարադրել է որոշակի հիմնավորումներ: Մասնավորապես, հեղինակը, ի թիվս այլնի, թեմայի արդիականությունը, մասամբ՝ նաև հրատապությունը դիտարկել է հետևյալ տեսանկյունից. «Մաքսային իրավախախտումների գիտագործնական վերլուծությունները, ներառյալ՝ դրանցում օրենսդրական բացերի, սխալ կամ տարակերպ մեկնաբանման տեղիք տվող ձևակերպումների շտկմանն ուղղված առաջարկներն էական նշանակություն ունեն նաև մաքսային գործի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց իրավունքների և օրինական շահերի

պաշտպանության առավել գործունե աշխատանքների սահմանման իմաստով ևս, քանզի հնարավորություն են տալիս արդյունավետ հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը»:

Աշխատանքը պատրաստված է գիտական բարեխղճությամբ, այն կարող է գնահատվել որպես ինքնուրույն հետազոտության արդյունք, ուղեկցվել է գիտական նորույթին հիմնականում՝ համապատասխանող եզրահանգումներով: Ատենախոսությունում չկան այլոց մտքերն ու դատողությունները, միջազգային զեկույցներում կամ այլ աղբյուրներում արտացոլված մոտեցումները որևէ կերպ յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական ու տարընթերցումների տեղիք չտվող ակադեմիական լեզվաոճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է պատշաճ գիտական բարեվարքություն:

Աշխատանքի ձևավորումը հիմնական գծերով համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Միաժամանակ, առկա են մի շարք շեղումներ, որոնց անդրադարձ է արված սույն եզրակացության նկատառումների և դիտողությունների հատվածում:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունը, դրանց շարադրանքի պահանջվող հստակությունը, ինչպես նաև ներքին համակարգային կապը:

Հետազոտության համար ընտրվել է հիմնականում հայրենական և ուսական գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր: Սկզբունքորեն այս դիրքորոշումը միայն մասամբ է արդարացված, քանզի, ի տարբերություն եվրոպական երկրների մեծ մասի, որոնցում քրեական օրենսգրքերը հիմնականում՝ ներառում են քրեական հանցագործությունները և քրեական զանցանքները, որոշ արտասահմանյան երկրներում մաքսային խախտումները որակվում են ինչպես քրեական հանցագործություններ, այնպես էլ քրեական զանցանքներ, օրինակ՝ Իսպանիայում, Ավստրիայում և այլն:

Ատենախոսության կառուցվածքի առնչությամբ գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական կառուցվածք, ինչը հնարավորություն է տվել, նախ, անդրադառնալու առավել ընդհանուր և եզրահանգումների համար կարևոր նյութ հանդիսացող հարցադրումների:

Հեղինակը արձանագրել է քննարկվող ոլորտներում առկա իրավակարգավորումների որոշ հիմնախնդիրները, դրանց առնչվող իրավական հարցադրումները ուսումնասիրության առարկա է դարձրել առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ և ըստ այդմ էլ՝ բանաձևել է դրանց վերաբերյալ սեփական դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները:

Ատենախոսությունը, դրական գնահատելով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները հնարավորինս համակարգված ներկայացնում ենք ստորև.

1. Հեղինակն անդրադարձել է մաքսային իրավախախտումների համար իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցին և ներկայացրել մի շարք եզրահանգումներ, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց ևս վարչական պատասխանատվության սուբյեկտ ճանաչելուն, վարչական պատասխանատվության ենթարկելու նախապայմաններին և դրանց իրավակարգավորման առանձնահատկություններին: Սկզբունքորեն համամիտ լինելով մաքսային իրավախախտումների համար իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության առնչությամբ եզրահանգմանը, կարծում ենք, այն կարող է առավել համապարփակ լինել, եթե հաշվի առնվեին հետևյալ նկատառումները՝

- հեղինակը առաջադրել է իրավաբանական անձի վարչական պատասխանատվության հիմքերը, որոնք համահունչ չեն ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածով, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծով նախատեսված հիմքերին: Ընդհանրապես առավել նպատակահարմար կլիներ, եթե հետազոտության հիմքում դրվեր ոչ միայն գործող օրենսգիրքը, այլև նախագիծը, որի նախնական տարբերակը պաշտոնապես

իրապարակվել է Արդարադատության նախարարության կայքում, իսկ ներկայումս ընթանում են ավարտական փուլի աշխատանքները: Եթե հեղինակը համամիտ չի եղել արդեն իսկ շրջանառության մեջ դրված կարգավորումներին, ապա դա նպատակահարմար էր արտացոլել աշխատանքում,

- իրավաբանական անձանց պատասխանատվության սուբյեկտ չճանաչելը, ըստ էության, կոռուպցիոն մեծ ռիսկեր է պարունակում, քանզի բազմաթիվ դեպքեր են բացահայտվել, երբ մեծարժեք ապրանքների իբրև ներկրող են հանդես եկել ֆիզիկական անձինք, որոնք առնվազն գրանցված են որպես նպաստառու, չունեն որևէ սեփականություն և այլն: Այլ կերպ ասած՝ այդ անձանց ստվերում եղել են կոնկրետ իրավաբանական անձինք, իսկ հեղինակի կողմից առաջադրված նախապայմանները հնարավորություն չեն տալիս իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկել նաև այսպիսի իրավիճակներում ներկրումների համար:

2. Ընդհանուր առմամբ, հեղինակի եզրահանգումները, այդ թվում՝ օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունները վերաբերում են գործող օրենսդրական ակտերին: Ավելին, հեղինակը փորձել է Սահմանադրական նադատարանի և Վճռաբեկ դատարանի մի շարք դատական ակտերով հիմնավորել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը չի կարող կարգավորել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանն առնչվող հարաբերությունները: Տվյալ դեպքում, անտեսվել է, որ այդ դատական ակտերով ոչ թե սկզբունքորեն բացառվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն սահմանելու հնարավորությունը, այլ ընդգծվել է, որ գործող օրենսգիրքն իր ներկա կարգավորումներով չի կարող տարածվել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության վրա: Նույն իրավական չափանիշներով նախկին ՀՀ քրեական օրենսգիրքը չէր կարող տարածվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վրա, սակայն դրանով չէր բացառվում, որ նոր կարգավորումներով քրեական օրենսգիրքը արդեն լիարժեք տարածվեր իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վրա:

Մինչդեռ՝ ներկայումս արդեն իսկ օրենսդրական նախաձեռնության հարթությամբ մշակվում են նախագծեր, որոնց անդրադարձանք նաև նախորդ կետում, որոնցում ելակետային է դիտարկվում ոչ թե վարչական պատասխանատվություն սահմանող մի քանի տասնյակի հասնող, ընդ որում, միմյանցից անհարկի էապես տարբերվող օրենսդրական ակտերի գոյությունը, այլ դրանք մեկ միասնական օրենսդրական ակտում համակարգելու անհրաժեշտությունը: Եվ խնդիրը բնավ վարչարարության առանձնահատկությունները չեն, այլ դրանց անհիմն ու անհամակարգ բազմազանությունը, որոնք աղերսներ ունեն Սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքի, պատշաճ վարչարարության իրավունքի և նմանաբնույթ այլ հիմնադրույթների հետ: Ընդհանրապես վարչական պատասխանատվություն սահմանող մեծաթիվ օրենսդրական ակտերի առկայությունը անհարկի բարդություններ է ստեղծում նաև իրավակիրառ պրակտիկայում:

3. Ատենախոսությունում անդրադարձ է արվել մաքսային իրավախախտումների համար վարչական պատասխանատվության առանձնահատկություններին, դրանց մի մասն էլ հեղինակն է առաջադրել՝ կոնկրետ հիմնավորումներով: Սակայն հետազոտությունն առավել արժեքավոր կլիներ, եթե ամբողջական, համալիր բացահայտվեին ընդհանրապես վարչարարության առանձնահատկությունների անհրաժեշտությունը, դրանց ընդհանուր նպատակն ու չափանիշները: Իհարկե, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է առանձին տեսակի վարչական վարույթների համար առանձնահատկություններ սահմանելը, սակայն ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ գիտագործնական հարթությամբ դեռևս ամբողջական պատասխան չի տրվել այն հարցին, թե ինչու են անհրաժեշտ այդ առանձնահատկությունները, ինչպես են դրանք համադրում սահմանադրական սկզբունքները և իրավունքները գերատեսչական ողջամիտ շահերի հետ և այլն: Վերջին հաշվով, առանձնահատկություններն ինքնանպատակ չեն, ընդհանուր կանոններից ցանկացած շեղում պետք է ունենա իր հստակ բացատրությունը:

Խնդիրն այն է, որ հիշյալ որոշակի սահմանափակումների բացակայությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում զուտ գերատեսչական շահերի չափանիշներով վարչարարության առանձնահատկություններ սահմանելու համար, քանզի Սահմանադրությամբ ամրագրված մյուս համընդհանուր սահմանափակումները, ինչպես օրինակ՝ համաչափությունը, որոշակիությունը և այլն, չափազանց բարդ է լինում կոնկրետ մաքսային վարչաչարությունում ըմբռնել և դրանց համահունչ գործել։ Այս տեսանկյունից, ատենախոսությունում վարչարարության առանձնահատկություններին վերաբերող եզրահանգումները, թերևս հարկ էր հիմնավորել նաև ընդհանուր չափանիշների համատեքստում։

4. Թեզի ձևավորման պահանջների տեսանկյունից հարկ է նկատել, որ հեղինակը՝ ա) առանձին դեպքերում անտեսել է, որ օրենսգրքերի անվանումը (օրինակ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի), ի տարբերություն օրենքների, չափերտների մեջ չի ներառվում, բ) գրականության ցանկում սահմանադրական պետական մարմինների անվանումները չեն համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված չափանիշներին, ընդ որում, մի դեպքում՝ այդ մարմինների անվանումները գրված է մեծատառով, մեկ այլ դեպքում՝ փոքրատառով (օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարան և ՀՀ սահմանադրական դատարան) և այլն, գ) մենագրությունների ոչ բոլոր պարտադիր բաղադրիչներն են նշված գրականության ցանկում, օրինակ՝ մեծ մասի պարագայում նշված չեն էջերը, հրատարակությունը և այլն։


Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի 7 գիտական հոդվածում, որոնք հրատարակվել են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հանդեսներում։

Վերը նշված թերություններով և նկատառումներով հանդերձ, Սյուզաննա Արմենի Վարդանյանի «Վարչական պատասխանատվությունը մաքսային ոլորտում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճան հայցելու ատենախոսության համալիր վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և հեղինակին, Սյուզաննա Վարդանյանին կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Պետության
և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի
վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր



ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

12-ը նոյեմբերի 2025 թվական

Պաշտոնական ընդդիմախոս իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ



ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«12» նոյեմբերի 2025 թվական

